ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃԸՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2024 թվականի N 1048

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի <<Նոր Հաճըն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N21-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Համայնքի 2024 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000 (հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս. Բաղալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

30.04.2024թ.
ք. Նոր Հաճըն

Հավելված
Նոր Հաճըն համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 30-ի N 1048 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Գումարի չափը՝ դրամ	Հասցե
1.	Նարինե Նալբանդյան Վլադիմիրի	70000	Ք. Նոր Հաճըն, Չարենցի փ., շ. 17, բն. 6
2.	Կարինե Վարդանյան Պատվականի	70000	Ք. Նոր Հաճըն, Թումանյան փ., շ. 9, բն. 18

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**